

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանը հայտարարում է մրցույթ մարզային ենթակայության՝ «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության՝ «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն 4 տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
  2. Մրցույթը կանցկացվի 2023 թվականի հունվարի 25-ին ժամը 11<sup>00</sup>-ին:
  3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան են ներկայացնում՝
    - 1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).
    - 2) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի.
    - 3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.
    - 4) ինքնակենսագրություն.
    - 5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.
    - 6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.
    - 7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ.
    - 8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ.
    - 9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ. (արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).
    - 10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
    - 11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).
    - 12) պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները.
- Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունվում են 2022 թվականի նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 24 –ը ներառյալ:

Մրցույթը կկայանա մարզպետարանի շենքում /ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, հասցեով/ Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արագածոտնի մարզպետարան /հասցե, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Անձնակազմի կառավարման բաժնի, հեռախոս /0232/ 3 5383/: